ոռոգում է Խիխօձիրօ, Նադաբմիր, Աբուլաձէ, Պուշրուկաուլի, Մախալակուրի գեղերը, ուր աջից ընդունում է Պուշրուկաուլի եւ ձախից՝ Վերնեքի առուակները։ Խիխօկերի մօտ է Վարդից-Ցիխէ կիսականգուն բերդը ընդարձակ աւերակներով։ Առաջ գնալով՝ ընդունում է աջից Կվատիա, Ցորլանա, Ելելիձէ, Սխալտա, Պոչխա, Ջամագուլա· ձախից՝ Վերնեքի, Մախալակուրի, Կինինաուրի, Խոզրովանիձէ, Պապոշվիլեքի, Պուրտիօ եւ բազմաթիւ մանր առուակներ եւ Ջամեդի մօտ խառնւում է Աչարա վտակին։ Աչարան ուղղուելով արեւմուտք, աջից ընդունում է Նիգոզաուլի, Ջանխալօ, եւ ձախից՝ Ճիղլուրի, Բուդուրաուլի առուակները մինչեւ հասնում է Գորխանաուլի գեղը։ Այստեղ Աչարա վտակին խառնւում է Մարիտիսի մեծ առուակը, որ իջնում է Դեմիր-Կափու լ-ից, դէպի հիւսիս արեւմուտք ուղղուած՝ 22 կիլոմետր երկարութեամբ անցնում է Ցիլատի գեղից, հասնում է Դարչիձէ գեղը, ուր ընդունում է աջից Դարչիձէ եւ ձախից՝ Թամաշէտի առուները։ Միշտ միեւնոյն ուղղութեամբ ընթանալով՝ անցնում է Կոլոշնարի, Շուբան, Եակոբաձէ, Կոբալտա, Կուրտաուր, Մախալակիձէ գեղերը, որոց մօտից հոսող համանուն վտակները միանում են Մարիտիսխեւին։ Այստեղ ձախից միանում է Էրթովաթի առուակը, որ իջնում է Շուբլիձէ լ-ից,